ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ՈՐՈՇՈՒՄ

«29» դեկտեմբեր 2019 թվականի N 7/6

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 9-րդ մասի 9-րդ կետով և հիմք ընդունելով «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ, 6-րդ մասերը Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի անդամների և աշխատակիցների պարգևատրման կարգ»-ը՝ համաձայն Հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդ օրվանից:

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ Լ. ՅՈԼՅԱՆ

Հավելված

Հաստատվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի
2019թ. մարտի 29-ի թիվ 7/6
որոշմամբ

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ԵՎ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԿԱՐԳ

1. Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի (այսուհետ՝ Պալատ) անդամների, քաղաքացիական ծառայողների, քաղաքացիական աշխատանք կատարողների, հայեցողական պաշտոն զբաղեցնող անձանց, տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց և փորձագետների (այսուհետ՝ Աշխատակիցներ) պարգևատրումը կարող է իրականացվել ՀՀ պետական բյուջեով նախատեսված աշխատավարձի ֆոնդի տնտեսված միջոցներից, պետական ծառայողների պարգևատրման ֆոնդի, Պալատի անդամների և աշխատակազմի ծառայողների խրախուսման և համակարգի զարգացման նպատակային ֆոնդի (այսուհետ՝ Նյութական խրախուսման և զարգացման ֆոնդ), /Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ/, ինչպես նաև Պալատի պահուստային ֆոնդի միջոցներից:

2. Սույն կարգով կանոնակարգվում է միայն Նյութական խրախուսման և զարգացման ֆոնդից, աշխատավարձի ֆոնդի տնտեսված միջոցներից, ինչպես նաև Պալատի պահուստային ֆոնդից Պալատի անդամների և աշխատակիցների պարգևատրման չափորոշիչները և ընթացակարգը:

3. Պարգևատրման հիմքում ընկած են հետևյալ չափորոշիչները՝ հաշվեքննության արդյունքները, և/կամ իրականացված հաշվեքննության գործընթացի փաստաթղթավորման որակը, և/կամ կատարված աշխատանքի բարդությունը, ծավալը, որակը, և/կամ լրացուցիչ հանձնարարականների կատարումը:

4. Պալատի անդամների և աշխատակիցների միջև նյութական խրախուսման համար նախատեսված միջոցները կարող են բաշխվել եռամսակային կտրվածքով և/կամ ըստ կատարած աշխատանքների անհատական արդյունավետության:

5. Եռամսյակային կտրվածքով պարգևատրման դեպքում այդ միջոցները հաշվարկվում և վճարվում են համապատասխան եռամսյակի ավարտից հետո, բացառությամբ 4-րդ եռամսյակի

պարգևատրման միջոցների, որոնք կարող են տրամադրվել մինչև ֆինանսական տարվա ավարտը:

6. Եռամսյակային կտրվածքով պարգևատրման դեպքում Պալատը որոշում է պարգևատրման ֆոնդի մեծությունը: Պարգևատրման ֆոնդը բաղկացած է՝ «Պալատի անդամների պարգևատրման», «Գլխավոր քարտուղարի և կառուցվածքային ստորաբաժանման մեջ չընդգրկված աշխատակիցների պարգևատրման» և «Պալատի կառուցվածքային ստորաբաժանումների պարգևատրման» ենթաֆոնդերից:

7. «Պալատի անդամների պարգևատրման» ենթաֆոնդը հավասար է Պալատի անդամների աշխատավարձերի հանրագումարի և Պալատի կողմից սահմանվող գործակցի արտադրյալին: Եռամսյակային կտրվածքով Պալատի անդամի պարգևատրումն իրականացվում է Պալատի որոշմամբ: Պալատի անդամի պարգևատրման չափը հաշվարկվում է «Պալատի անդամների պարգևատրման» ենթաֆոնդի նկատմամբ յուրաքանչյուր անդամի մասով Պալատի կողմից սահմանվող տոկոսային հարաբերակցությամբ, որի հանրագումարը կազմում է 100 տոկոս:

8. «Գլխավոր քարտուղարի և կառուցվածքային ստորաբաժանման մեջ չընդգրկված աշխատակիցների պարգևատրման» ենթաֆոնդը հավասար է Գլխավոր քարտուղարի աշխատավարձի և կառուցվածքային ստորաբաժանման մեջ չընդգրկված աշխատակիցների աշխատավարձերի հանրագումարի և Պալատի նախագահի կողմից սահմանվող գործակցի արտադրյալին: Գլխավոր քարտուղարի և կառուցվածքային ստորաբաժանման մեջ չընդգրկված աշխատակիցների պարգևատրման չափը յուրաքանչյուրի համար հաշվարկվում է «Գլխավոր քարտուղարի և կառուցվածքային ստորաբաժանման մեջ չընդգրկված աշխատակիցների պարգևատրման» ենթաֆոնդի նկատմամբ, Պալատի նախագահի կողմից սահմանվող (խորհրդակցելով անմիջական ղեկավարի հետ) տոկոսային հարաբերակցությամբ, որի հանրագումարը կազմում է 100 տոկոս:

9. «Պալատի կառուցվածքային ստորաբաժանումների պարգևատրման» ենթաֆոնդը հավասար է առանձին կառուցվածքային ստորաբաժանումների պարգևատրման ֆոնդերի գումարին: Եռամսյակային կտրվածքով սահմանվում է յուրաքանչյուր կառուցվածքային ստորաբաժանման պարգևատրման ֆոնդը, որը հավասար է աշխատակիցների (բացառությամբ թափուր հաստիքների) աշխատավարձերի հանրագումարի և Պալատի նախագահի կողմից տվյալ ստորաբաժանման համար սահմանված գործակցի արտադրյալին: Ստորաբաժանման

ղեկավարի պարգևատրման չափը որոշվում է ստորաբաժանման պարգևատրման ֆոնդի նկատմամբ կիրառելով համապատասխան ստորաբաժանման աշխատանքները համակարգող Պալատի անդամի կողմից ներկայացվող պարգևատրման տոկոսային հարաբերակցությամբ, որը հաստատվում է Պալատի նախագահի կողմից՝ անհրաժեշտության դեպքում կատարելով համապատասխան փոփոխություններ: Հաշվեքննություն իրականացնող, հաշվեքննության գործընթացին առնչվող գործառույթ իրականացնող մասնագիտական կառուցվածքային վերոնշյալ ստորաբաժանումների մյուս աշխատակիցների պարգևատրման տոկոսային հարաբերակցությունը՝ (հաշվի առնելով նաև ստորաբաժանման ղեկավարի համար հաշվարկվածը) Պալատի նախագահին ներկայացվում են տվյալ ստորաբաժանման ղեկավարի և ստորաբաժանման աշխատանքները համակարգող անդամի կողմից, իսկ աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների աշխատակիցների տոկոսային հարաբերակցությունը՝ (հաշվի առնելով նաև ստորաբաժանման ղեկավարի համար հաշվարկվածը) տվյալ ստրաբաժանման ղեկավարի և Գլխավոր քարտուղարի կողմից: Ներկայացված հարաբերակցությունները հաստատվում են Պալատի նախագահի կողմից: Յուրաքանչյուր ստորաբաժանման աշխատակիցների տոկոսային հարաբերակցության հանրագումարը կազմում է 100 տոկոս:

10. Ըստ կատարած աշխատանքների անհատական արդյունավետության՝ պարգևատրումներն իրականացվում են հաշվեքննության ընթացքի և արդյունքների հիման վրա կամ լրացուցիչ հանձնարարականների պատշաճ կատարման դեպքերում՝ Հաշվեքննիչ պալատի, Հաշվեքննիչ պալատի նախագահի, Հաշվեքննիչ պալատի անդամի, Գլխավոր քարտուղարի կամ համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի միջնորդությամբ և 7-րդ, 8-րդ, 9-րդ կետերով սահմանված լիազորությունների շրջանակներում: Ներկայացված գործակիցները (բացառությամբ պալատի անդամի մասով) հաստատվում և կարող են փոփոխվել Պալատի նախագահի կողմից:

11. Պարգևատրման ենթակա չեն այն Աշխատակիցները, որոնց նկատմամբ կիրառված կարգապահական տույժը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մարված կամ հանված չէ, կամ Պալատում աշխատել է երեք ամսից պակաս ժամկետով: